ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 7-Ա

ք.Արթիկ 08 փետրվարի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 8-Ի N 2 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել նիստի հետևյալ օրակարգը

Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆագործների փողոց 24 հասցեում գտնվող Արթիկի թիվ 7 միջնակարգ դպրոցի զբաղեցրած և սպասարկող 0,76հա մակերեսով հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխելու մասին.

Նիստին ներկա ավագանու անդամներ՝ 8

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Զոփիկյան Արտակ

Աբրահամյան Ալեքսան

Ղուլիջողյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ

Մկրտչյան Մուշեղ

Հակոբյան Հարություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ.Տ.

ք. Արթիկ

2018թ. փետրվարի 8-ի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 8-Ն

ք.Արթիկ 08 փետրվարի 2018թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏՈՒՖԱԳՈՐԾՆԵՐԻ ՓՈՂՈՑ 24 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐԹԻԿԻ ԹԻՎ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ 0,76 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14^3-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու վերաբերյալ քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 5-ի N 18 դրական եզրակացությունը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության սեփականությունը հանդիսացող Շիրակի մարզի Արթիկ համայնքի Տուֆագործների փողոց 24 հասցեում գտնվող թիվ 7 միջնակարգ դպրոցի զբաղեցրած և սպասարկող 0,76 հա մակերեսով, 08-002-0160-0014 կադաստրային ծածկագրով՝ բնակավայրերի նպատակային նշանակություն ունեցող հասարակական գործառնական նշանակությամբ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները փոփոխել՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը՝ արդյունաբերական օբյեկտների :

Նիստին ներկա ավագանու անդամներ՝ 8

Կողմ՝ 8, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Կողմ՝ 8

Վարդանյան Ոսկան

Գասպարյան Վաղարշակ

Չոփիկյան Արտակ

Աբրահամյան Ալեքսան

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ

Մկրտչյան Մուշեղ

Հակոբյան Հարություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ՎԱՐԱԳՅԱՆ

Կ.Տ.

ք. Արթիկ

2018թ. փետրվարի 8-ի